«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Առարկան՝ Ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝Դավթյան Սուսաննա

Ուսումնական հաստատություն՝Չարենցավանի Ս. Ավանյանի անվան 4 հիմն. դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ 1.Առարկայական դասաժամերին դաստիարակության իրականացման հնարավորությունը և եղանակներ

1.1.Ինչ ենք հասկանում դաստիարակություն ասելով..... 4

1.2. Ուսուցչի անձնային և մասնագիտական որակների ազդեցությունը աշակերտի անձի ձևավորման վրա.....6

1.3. Երեխայի տարիքային առանձնահատկությունները..... 8

1.4. Կրթության ավանդական և նոր մոտեցումների համեմատական

վերլուծություն..... 10

Գլուխ 2. Բարոյական դաստիարակություն……14

Եզրակացություններ..... 17

Օգտագործված գրականության ցանկ..... 18

Ներածություն

Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսուցման և դաստիարակության վերաբերյալ պահանջների տեսանկյունից չափորոշչի հետ աշխատելու ընթացքում պետք է ծանոթանալ ամբողջ փաստաթղթին,ուշադիր վերլուծության ենթարկելով դրա առանձին բաժինները:

Այստեղ կարևոր է առանձնացնել դաստիարակությանն առնչվող պահանջները և ճիշտ պլանավորել նպատակին հասնելու գործողությունները: Սովորողը պետք է՝ ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք տիրապետի Հայաստանի Հանրապետության պետական լեզվին՝ հայերենին, իմանա իր երկրի քաղաքական, իրավական և տնտեսական հիմքերի, գիտության, արվեստի և մարզական նվաճումների մասին,գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը, մտահոգվի ազգային և պետական խնդիրների լուծմամբ, ունենա պետական չափորոշիչով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն,ունենա ինքնուրույն մտածելակերպ, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն, իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, իմանա բնապահպանական հիմնախնդիրները, լինի բնության և շրջակա միջավայրի պաշտպան, կարողանա օգտվել հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաներից, իմանա առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները և դրանք կիրառի կյանքում, կարողանա ճիշտ գնահատել իր հնարավորությունները, ունենա վստահություն սեփական ուժերի հանդեպ:

Ուսուցչի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է ուսումնական գործընթացի ընթացքում: Ուսուցչի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Այս առումով անգնահատելի է ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը: Մեծ է ուսուցչի՝ որպես կրթողի, դաստիարակողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել այն մեթոդները, որոնք կարող են նպաստել սովորողների դաստիարակության, ուսումնառության, ընդհանուր զարգացման ու աշխարհաճանաչողության վրա:

Հետազոտության խնդիրը: Սահմանել այն եղանակներն ու կարողությունները, որոնք կնպաստեն, որ ուսումնական գործընթացում սովորողն ունենա գիտակցված մոտեցումներ, առաջադիմի, ունենա կրթական չափորոշիչների վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, հմտություններ ու արժեքային համակարգ:

ԳԼՈՒԽ 1.Առարկայական դասաժամերին դաստիարակության իրականացման հնարավորությունը և եղանակները

1.1.Ինչ ենք հասկանում դաստիարակություն ասելով

Դաստիարակությունը գործընթաց է, որի արդյունքում ձևավորվում է անհատը՝իր արժեհամակարգով, իր ընկալումներով, վերաբերմունքներով ու գործելակերպով: Ամեն ազգ, ամեն հասարակություն, ամեն պատմական ժամանակաշրջան և հասարակարգ դաստիարակություն բառի մեջ իր բովանդակությունն է դրել: Այս գործընթացն ընթանում է անկախ և տարերայնորեն(շրջապատի, միջավայրի ազդեցությունը և այլն), բայց և նպատակաուղղված, մտածված և ծրագրված (ընտանիքում, ուսումնական հաստատություններում): Ի վերջո՝ դաստիարակության (առավել ևս՝ նպատակաուղղված դաստիարակության) նպատակը հանգում է տվյալ հասարակության պահանջներին համապատասխանող անհատներ ձևավորելուն: Օրինակ, դաստիարակությանը ներկայացվող՝ամբողջատիրական հասարակության պահանջներն այլ են, որի պարագայում հաճախ փորձ է արվում դաստիարակության միջոցով երեխային զրկելու անհատականությունից, ստեղծագործականությունից: Իրականում նման գործընթացի մենք հաճախ ենք ականատես լինում, երբ ճնշվում է ցանկացած ինքնատիպ, տարօրինակ թվացող անակնկալ դրսևորում, որը չի տեղավորվում մեր ընտրած դաստիարակչական գործընթացի բովանդակության մեջ: Իրականում այս վտանգը միշտ առկա է, որովհետև հնարավոր չէ գիտելիքը այնքան զտված մատուցել, որ զերծ լինի գաղափարներից, հայացքներից, տեսանկյուններից: Գուցե այդ վտանգն ամենաքիչն է բնագիտական առարկաների դեպքում: Բայց արդյոք պե՞տք է զտված ստերիլ գիտելիքներ տալ, առանց վերաբերմունքների: Մնում է այն հարցը քննարկել, թե ինչ պետք է հասկանալ դաստիարակություն ասելով, եթե նպատակ ունենք ձևավորելու ժողովրդավար, ազատ ու հոգատար հասարակություն և ինչ պետք է դնել դրա բովանդակության մեջ, որպեսզի այն ոչ թե սահմանափակի անձի անհատական դրսևորումներն, այլ հակառակը՝ազատորեն խրախուսի այն: Պահանջները տարբեր են, քանի որ տարբեր է հիմնական արժեքային համակարգը:

Ինչևէ, պայմանականորեն ասած՝լավագույն որակների դաստիարակումն էլ, կարող է արդյունավետ կամ ոչ արդյունավետ լինել: Մեր նպատակն է՝վերլուծել, թե ինքներս այսօր

ի՛նչ բովանդակություն ենք տեսնում «դաստիարակություն»բառի մեջ, ապա փորձել՝արդյունավետ ուղիներ գտնել դրա իրականացման համար:

Ծանոթանանք դաստիարակության մասին մի շարք սահմանումների, դրանք բազմաթիվ են: Փորձենք համեմատել և հասկանալ, ո՞ր սահմանումն է ավելի ընդգրկուն, համապարփակ և լիարժեք: Արդյոք հնարավո՞ր է դաստիարակության այնպիսի սահմանում ձևակերպել, որից երևա, որ դրա նպատակն է ապահովել, այլ ոչ թե սահմանափակել անհատականության զարգացման ազատությունը: Սա բավականին բարդ, երբեմն՝ անիրագործելի թվացող խնդիր է, սակայն կարելի է մտածել այդ ուղղությամբ և միշտ այս նպատակն առջևում ունենալով՝ փորձել կառուցել դաստիարակության բովանդակությունը:

1.Դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական պատմական փորձի փոխանցման գործընթացն է՝ նրանց կյանքի ու աշխատանքի պատրաստելու նապատակով: (Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան)

2.Դաստիարակությունը մանկավարժի գործունեությունն է՝ ուղղորդված՝ դպրոցականի բազային պահանջմունքների բավարարման համար ստեղծելու հոգեբանական մանկավարժական պայմաններ: (Ե. Ն. Ստեպանով, Լ. Մ. Լուզինա)

3.Դաստիարակությունը դաստիարակվողների վրա իրականացվող նպատակաուղղված և համակարգված ներգործությունն է՝ նրանցում ձևավորելու համար որոշակի աշխարհայացք, բարոյական վարք, բնավորության գծեր… (Է. Բ. Կայնովա)

4.Դաստիարակությունը մարդկային արժեքների ներքնայնացման սոցիալապես կազմակերպված գործընթաց է: (Բ. Ա. Սլաստենին)

5.Դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողների հատուկ կազմակերպված գործունեությունը է՝ վերջինների անձերի զարգացման նպատակները իրականացնելու համար: (Վ. Վ. Անիսիմով)

6.Դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողների ստեղծագործական և նպատակաուղղված փոխգործունեություն է՝ ստեղծելու նպաստավոր պայմաններ, հասարակության սոցիալ-մշակութային արժեքների յուրացումը ապահովելու համար: (Խմբ. Պ. Ի. Պիդկասիստիյ)

7.Դաստիարակությունը արտաքին աշխարհի անմիջական կամ միջնորդավորված ներգործությունների առաջացրած մտածական կամ պրակտիկ գործունեության շնորհիվ մարդու հոգեկան և ֆիզիկական ուժերում կայացող բազմաբնույթ որակական փոփոխությունների գործընթացն է: (Ս. Մանուկյան)

1.2.Ուսուցչի անձնային և մասնագիտական որակների ազդեցությունը աշակերտի անձի ձևավորման վրա

Փորձենք հիշել մեր սիրելի ուսուցիչներին. ու՞մ էինք սիրում, հարգում, փորձում նմանվել, և ինչու՞: Եկեք մտովի նկարագրենք, որակենք նրանց. ո՞ր որակներն առաջինը կթվարկենք՝ անձնայի՞ն, թե՞ մասնագիտական: Հաճախ անձնային որակներն ավելի ենք նախընտրում, իսկ եթե մասնագիտականն ենք նախընտրում վերջում չենք մոռանում հիշատակել նաև անձնայինը: Այսպիսով՝ ուսուցիչը միայն մաթեմատիկայի կամ ֆիզիկայի մասնագետ չէ, նա մանկավարժ է, իսկ մանկավարժի համար շատ կարևոր են անձնային որակները:

Ուսուցչի նախատիպը իր մեջ պարունակում է և՛ փորձառու հասունություն, և՛ մանկական միամտություն, ինչից հետևում է, որ լավ ուսուցիչն ինչ որ չափով պետք է իրեն երեխա զգա: Նրա մասնագիտության այդ երկու՝ տարբեր բևեռների առկայությունն էլ ապահովում է երեխաների հետ աշխատանքի հաջողության երաշխիքը: Այդ հաջողության գաղտնիքը կայանում է նրանում, որ չմոռացված մանկությունը հնարավորություն է ընձեռում ուսուցչին դատավորի դերից անցում կատարել հասկացողի, ընկալողի, ապրումակցողի, փորձառուի, աջակցողի, բայց ոչ պարտադրողի դերին:

Ուսուցչի մասնագիտական մտածելակերպում և վարքագծում բարդ համակարգով միմյանց հետ փոխկապված են ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումներ: Դրական դրսևորումներից են ապրումակցումը և հանդուրժողականությունը, կողմնորոշումը համամարդկային արժեքներին, մասնագիտական վերլուծությունը, կանխատեսումը, երեխաների խնդիրների և իրավիճակների ընդգրկուն տեսլականը: Բացասական դրսևորումներից են՝ խրատական կեցվածքը, չափից ավելի բարձր ինքնագնահատականը, ինքնավստահությունը, քննադատական մտածողության նվազումը, հայացքների դոգմատիզմը, հաղորդակցական ճկունության բացակայությունը, մանկավարժական համառությունը, կողմնորոշումը հասարակական հավանությանը, ցածր մոտիվացիան:

Ուսուցիչը միայն գիտելիք փոխանցող չէ, նա է երեխայի կյանքի զգալի մասի կազմակերպման պատասխանատուն և հաճախ ուսուցչի վրիպումները, անգամ ոչ այնքան տեսանելի, կարող են խոր հետք թողնել, նույնիսկ ճակատագիր որոշել:

Ահա թե ինչպես է բնութագրել ուսուցչի ներգործությունը երեխայի վրա հայտնի ուսուցիչ, հոգեբան Հայմ Գինոն՝ ***«Ես մի տագնապալի եզրակացության եմ հանգել՝ ես եմ դասարանում որոշիչ տարրը: Իմ անձնական վերաբերմունքն է եղանակ ստեղծում: Իմ***

տրամադրությունն է տրամադրություն ստեղծում: Որպես ուսուցիչ, ես կարող եմ երեխայի կյանքը թշվառ կամ երջանիկ դարձնել: Ես կարող եմ խոշտանգման գործիք կամ ոգեշնչման աղբյուր լինել: Կարող եմ նվաստացնել, ցավ պատճառել, կամ՝ բուժել: Ցանկացած պարագայում ինձանից է կախված՝ ճգնաժամը կխորանա՞, թե՞ կվերանա, երեխան լա՞վը, թե՞ վատը կդառնա»[1]:

Այսինքն ուսուցչի դիրքորոշումները, աշխարհայացքը, արժեհամակարգը, ճաշակը, վարքագիծը դառնում են աշակերտի անձի ձևավորման որոշիչ գործոն:

Այս ամենից կարելի է հետևություն անել, որ աշակերտի և ուսուցչի միջև ստեղծված հակադրությունը կարող է երբեմն հանգեցնել սոցիալական անդառնալի հետևանքների. ձևավորել սոցիալական խնդիրների հանդեպ անտարբեր մարդ, որն ընդունակ չէ ինքնակազմակերպման, ինքնուրույնության, քննադատական մտածողության, ապրումակցման, հանդուրժողականության, ուրիշներին աջակցելու, գնահատելու և այլն:

---

[1] **Haim G. Ginott, (1975), Teacher and child: A book for parents and teachers, New York, NY: Macmillan. ISBN 0-380-00323-6.http://en.wikipedia.org/wiki/Haim_Ginott**

1.3.Երեխայի տարիքային առանձնահատկությունները

Կրթական որևէ գործընթաց չի կարող լիարժեք իրականացվել առանց սովորողների զարգացման տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու: Դրանք կարևոր են կրթության բովանդակությունը որոշելիս, կրթական չափորոշիչներ սահմանելիս և դաստիարակությունը կազմակերպելիս: Տարիքին համապատասխան ուսուցումը կրթական նպատակների իրականացման հիմնական նախապայմանն է: Այն ենթադրում է կրթական միջավայրի համապատասխանություն երեխայի հնարավորություններին՝ սկսած նստարաններից և դասասենյակի կահավորանքից, վերջացրած մանկավարժական մոտեցումներով:

Իմացական ոլորտի զարգացումը հուզական, սոցիալական և ֆիզիկական ոլորտներից անկախ չի լինում: Այս բոլորը զարգանում են համալիր, և մեկի զարգացումը նպաստում է մյուսին: Բայց չի կարելի չարաշահել այդ ոլորտների զարգացման տարիքային հնարավորությունները:

Յուրաքանչյուր տարիքային փուլ անցնելիս՝ երեխան մեկ քայլ առաջ է գնում, կարողանում է ինքնուրույն կատարել այն, ինչ նախորդ փուլում կատարում էր մեծահասակի օգնությամբ:

Տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված ուսումնական նյութը պետք է ներկայացվի տվյալ տարիքի համար ընկալելի և դյուրին ձևով՝ ելնելով երեխայի մտածողության և ընկալման առանձնահատկություններից:

Հմուտ մանկավարժը դասապրոցեսը երեխայի հնարավորություններին համապատասխան կազմակերպելիս պետք է հաշվի առնի երեխայի ուշադրության և հիշողության առանձնահատկությունները:

Ուսումնական շարժառիթներ առաջացնելն այսօր լրջագույն, սակայն լուծելի խնդիր է. Որպեսզի երեխան անտարբեր չդառնա ուսումնական նյութի հանդեպ, պետք է պարզապես կրթության բովանդակությունը և դրա մատուցման ձևերը մոտեցնել երեխայի տարիքային հետաքրքրություններին: Այս տեսանկյունից գործուն միջոց է ուսուցման կազմակերպումը խաղերի ձևով: Խաղեր սիրելը տարիքային սահմանափակում չունի: Ուսուցանող խաղերը կարող են միաժամանակ և՛զվարճալի և՛լուրջ լինել: Բանն այն է, որ զվարճալի և հետաքրքիր զբաղմունքը լուրջ նպատակների հասնելու համար խանդավառություն է առաջացնում:

Մարդիկ կան, ըստ ամենայնի թմրած, լքված ու խորտակված մարդիկ, որ խաղը հասարակ բան են կարծում և իրենց մեռելությունը լրջություն են անվանում:Էդպես չի կենդանի, ապրող մարդը: Նա ոչ թե միայն խաղի պահանջ է զգում, այլև պարզ տեսնում ու նկատում է, որ էն ժամանակ, երբ մենք ծանր նստած մեծ մեծ բաներ ենք խոսում, խաղն ու նրա նման փոքրիկ համարված բաները իրենց վճռական գործն են տեսնում, կյանք, հոգի, լեզու՝ մարդ են ստեղծում:

Հովհաննես Թումանյան

Շաբլոն մտածող մարդիկ ամաչում են խաղից, մինչդեռ եթե ամաչելիք ինչ-որ բան կա՝ դա խաղալ չկարողանալն է:

Երեխաները ինչու՞ են վերջ տալիս խաղին: Գուցե այն պատճառով, որ խորհրդավոր աշխարհը, որտեղ հրաշքներ են կատարվում, վերածվում է մի առօրեական աշխարհի, որտեղ ամեն բան ունի իր բացատրությունը: Հոգնելով ու ձանձրանալով մակերեսային իրազեկությունից, երեխաները դադարեցնում են խաղը: Իսկ եթե երեխան չբավարարվի մակերեսային բացատրություններով, ապա իրերը երբեք այնքան հայտնի չեն դառնա, որ դրանցով խաղալը դառնա ձանձրալի: Հնարավոր է թերևս, որ խաղը ակտիվորեն չեն քաջալերում տրամաբանորեն մտածող մեծահասակները, որոնք համոզված են, թե այն անօգուտ է, և հասունանալու ժամանակը բնորոշում են որպես օգտավետ գործունեությամբ զբաղվելու պարտականություն:[2]

Էդուարդո դը Բոնո

[2]Էդվարդ դե Բոնո, Նոր մտքի ծնունդը, Ոչ շաբլոն մտածողության մասին, «Սովետական գրող» հրատարակչություն, էջ 102, 151 էջ, Երևան 1982թ.

1.4.Կրթության ավանդական և նոր մոտեցումների համեմատական վերլուծություն

Կրթությունը գիտելիքների պաշարի ու դաստիարակության միասնությունն է: Սա նորություն չէ: Զուտ գիտելիքներն առանց համապատասխան արժեքային համակարգի կարող են և ոչ ցանկալի նպատակի ծառայել՝ դաստիարակությունից կտրված գիտելիքը կարող է անգամ վտանգավոր լինել:Ամեն ժամանակ կրթության առջև իր պահանջներն է դնում: Դաստիարակության գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար նախ պետք է հստակ պատկերացնենք, թե ինչպիսի արդյունք ենք ուզում ունենալ:

Ժողովրդավար հասարակությանը, որի կերտմանը, համենայնդեպս, ձգտում ենք, հարկավոր է սերունդ, որը կազմված է վառ անհատականություն ունեցող անհատներից, որ ստեղծագործ միտք ունեն, քաջ գիտակցում են իրենց իրավունքներն ու պարտականությունները, մրցունակ են բայց և ունակ արդյունավետ համագործակցելու, բանակցելու, հարգում են մշակութային բազմազանությունը, հանդուրժող են և այլն:

Բոլորիս ծանոթ մի խոսք կա՝ ասում են, եթե երեխայի դաստիարակությունն սկսում եք վեց ամսականից, համարեք, որ վեց ամսով ուշացել եք: Դաստիարակությունը տևական գործընթաց է: Այն պայմանավորող կարևոր գործոն է ընտանեկան միջավայրը, նաև հասարակության ներգործությունը, կենդանի օրինակները, բայց և մասնագետների ուղղորդված աշխատանքը: Դպրոցը, ուր երեխան անց է կացնում իր գիտակից կյանքի զգալի մասը, ընտանեկան միջավայրի հետ հավասար, դաստիարակության շարունակական շղթայի կարևոր (եթե չասենք՝ ամենակարևոր) օղակներից մեկն է:

Դաստիարակության կարևորությունը գիտակցելով, հաճախ մեզ հարց ենք տալիս՝ բայց ի՞նչ կարող ենք անել, որպեսզի.

- կարողանանք դպրոցում ջերմ, հոգատար միջավայր ձևավորել,
- սովորել և սովորեցնել հարգել անհատականությունը, գնահատել տարբերությունները, կարևորել բազմազանությունը,
- կարողանանք երեխաներին անհատական մոտեցում ցուցաբերելու, բոլորի անհատական կարողությունները հաշվի առնելու եղանակներ գտնել,
- երեխաների մեջ ձևավորենք իրենց արարքների և ուրիշների հանդեպ պատասխանատվություն կրելու գիտակցություն,
- վստահ լինենք, որ մեր տված գիտելիքները հենց այն են, ինչ մեր երեխաներին պետք են գալու 21-րդ դարում հաջողությունների հասնելու համար,

- մեր աշակերտների մեջ սովորելու սեր և ձգտում արթնացնենք, դպրոցում անցկացրած պահերը նրանց համար հաճելի ու հիշարժան դարձնելով…

Հավանաբար շատերս ենք ականատես եղել նման հակասական իրավիճակների.

«Սա բոլորիս դասարանն է»- բայց որոշումները միայն ուսուցիչն է կայացրել:

«Բոլորդ հավասար եք»- բայց լավ սովորողներին ավելի հաճախ են գրատախտակի մոտ կանչել:

«Օգտագործե՛ք երևակայությունը»- բայց պահանջել են պատասխանել այնպես, ինչպես գրքում է գրված կամ ուսուցիչն է ասում:

«Բոլորն իրավունք ունեն»- բայց ոչ ոքի հետ հաշվի չեն նստել:

Փորձենք իմի բերել, թե ինչպիսի սկզբունքով ենք հաճախ առաջնորդվել և համեմատենք այն մոդելի հետ, որ կուզենայինք առաջարկել:

Վերը թվարկած խնդիրների պատասխանները միանշանակ չեն և չեն էլ կարող լինել: Տարիների մանկավարժական փորձն էլ, հաճախ, առանձնապես օգնություն չի առաջարկում:

Ավանդական մոտեցում	**Նոր մոտեցում**
Շեշտադրումը սովորեցնելու վրա է	Շեշտադրումը սովորելու վրա է
Անջատ հաջորդական գիտելիքներ:	Ինտեգրված, մեկը մյուսից բխող, իրար լրացնող գիտելիքներ և հմտություններ:
Տվյալ առարկայից ակադեմիական գիտելիքների հաղորդում	Գիտելիքները՝ որպես հիմք վերլուծելու, եզրակացություններ անելու և պատճառահետևանքային կապեր բացահայտելու համար
Ուսուցիչը՝ որպես գիտելիք հաղորդող	Ուսուցիչը՝ որպես խթանող և ուղղորդող
Սովորելը՝ որպես անհատական գործընթաց	Սովորելը՝ որպես սոցիալական գործընթաց. Համագործակցությունը խթանում է ընկալումը
Սովորեցնողն ուսուցիչն է, շեշտադրումն ուսուցանվող նյութի բովանդակության վրա է	Ուսուցիչը սովորեցնում է սովորել, և աշակերտները դառնում են ուսուցման գործընթացի տնօրինողը. Շեշտադրումը ճանաչողական գործընթացի վրա է
Ուսուցանվող նյութը համատեքստից	Ուսուցանվող նյութը բխում է իրական

դուրս է	կյանքից
Աշակերտը՝ որպես պասիվ ընկալող	Աշակերտը՝ որպես ակտիվ մասնակից և բովանդակության կերտող
Ակնկալվող միակ ճիշտ (թելադրված) պատասխան	Բաց միտք, բազմատեսակ լուծումներ
Ուսուցչի սահմանած չափանիշներ և նպատակներ	Համատեղ մշակված և բոլորի համար ընդունելի չափանիշներ և նպատակներ
Աշխատանքներ, որ ստուգում են	Աշխատանքներ, որ սովորեցնում են

Ակնհայտ է, որ ավանդական մեթոդը, կարծես, դաստիարակչական նպատակները զատում է դասավանդման պրոցեսից, մինչդեռ նոր մոդելը գիտելիքների հաղորդման համար ընտրում է մեթոդներ, որոնք դաստիարակող են, վերաբերմունք ձևավորող, մտածել և ընտրություն կատարել հորդորող, դրանով՝ արժեքային համակարգ ձևավորող: Զուտ ուսուցման տեսանկյունից՝ ավանդական մոդելը մեկ դասաժամի ընթացքում ամեն աշակերտի դժվար թե հինգ րոպեից ավելի խոսելու, արտահայտվելու հնարավորություն տա: Մինչդեռ խմբերում դասընկերների հետ համագործակցելով՝ այդ ժամանակը մի քանի անգամ ավելի է լինում:

Ավանդական՝ մրցակցության վրա հիմնված մոդելը շահեկան է մի քանիսի համար, սակայն ավելի մեծ մասը կորցնում, տուժում է: Մինչդեռ հասակակիցների հետ համագործակցությունը կարող է ոգևորել մինչև իսկ տվյալ առարկայից միջակ կարողություններով աշակերտին, եթե նա տեսնում է, որ ընկերներն իր մասնակցության կարիքն ունեն ընդհանուր նպատակին հասնելու համար:

Սակայն նոր մոդելն էլ իր պահանջներն է թելադրում ուսուցչին, դաստիարակին՝ էապես փոխելով դասարանում նրա դերը՝ լոկ գիտելիք փոխանցողից դարձնելով գործընկեր, ուղղորդող, խորհրդատու:

Գուցե թե չարչրկված, բայց ճշմարտացի է այն պնդումը, որ ուսուցչի գործն ամենակարևոր, մեծ հնարամտություն պահանջող, օրեցօր բարդացող մասնագիտություններից է: Ուսուցչից պահանջվում է ձեռքի տակ եղած միջոցներով ավելին ու ավելին անել: Դրա հիմնական նպատակը դասարանում փոխադարձ վստահության, ընկերության, համագործակցության մթնոլորտ ձևավորելու միջոցով երեխաների մեջ արժեքների, վերաբերմունքների և հմտությունների ձևավորումն է, որոնք նրանց կօգնեն դառնալ ժողովրդավարական

հասարակություն կերտող, ինչպես նաև այդ հասարակության լիարժեք անդամներ: Կսովորեն սովորել, սովորածը կիրառել, որոշումներ կայացնել և հիմնավորել իրենց ընտրությունը, բացահայտել իրենց անհատական ընդունակությունները և, բարդույթներից ձերբազատվելով, առավելագույնս բացահայտել իրենց ներուժը:

Աշակերտներին մատուցվող նյութը կարելի է կազմել այնպես, որ ծրագրային գիտելիքներ հաղորդելու գործընթացին զուգահեռ դաստիարակի, խթանի արժեքների ձևավորումը:

Առաջարկվող խաղ-վարժությունները հաճելի ժամանց կապահովեն, բայց և դրանց միջոցով ձեռք բերվածը կտպավորվի, կդրոշմվի երեխաների ուղեղում, քանի որ դրանք դաստիարակում են՝ առաջարկելով իրավիճակներ, որոնցից ելքերը երեխաներն իրենք պետք է գտնեն՝ գիտակցված ընտրություն կատարելով, փորձելով հասկանալ արարքների և գործողությունների հնարավոր հետևանքները:

Մյուս կողմից, դրանք հետաքրքիր կաղապարներ են առաջարկում և փոքր բովանդակային փոփոխություններով կիրառելի կլինեն ուսումնական ծրագրի ցանկացած բովանդակության առավել արդյունավետ մատուցման համար:

Գլուխ 2. Բարոյական դաստիարակություն

Դպրոցական դաստիարակությունը չի կորցրել իր արդիականությունը ինչպես մեր երկրում,այնպես էլ այլ, հատկապես հետ սովետական երկրներում :

Անկասկած մենք պետք է վերանայենք մեր մոտեցումները դաստիարակության արդի խնդիրներին, գնահատելով թե՛ հասարակության, թե՛ մարդու շահերը, հաշվի առնելով յուրաքանչյուրի իրավունքներն ու կարիքները, անհատականությունն ու ինքնությունը, չփորձելով տոտալիտար համակարգերի օրինակով բոլորին դարձնել նույն մոդելով պատրաստված ռոբոտներ:

Նախ և առաջ հարկավոր է պարզել, թե որն է ճիշտ ձևավորված բնավորությունը, ապա միայն ձևակերպել դաստիարակչական գործընթացների նպատակները: Լայն իմաստով՝ բնավորությունը անձի բարոյականության ***ճանաչողական,զգացմունքային, վարքագծային*** բաղադրիչների համակցությունն է: Ճիշտ բնավորություն ունենալ նշանակում է իմանալ, թե որն է լավը, ձգտել դրան և ճիշտ վարվել: Դպրոցը պետք է օգնի սովորողներին հասկանալու բարոյականության գլխավոր սկզբունքները, յուրացնելու դրանք և առաջնորդվելու դրանցով ողջ կյանքի ընթացքում: Բնավորության ճանաչողական կողմը ներառում է բարոյական առնվազն վեց առանձնահատուկ որակներ՝

1) կատարվածի բարոյական կողմի գիտակցում,
2) բարոյական սկզբունքների ճանաչումն, այն բանի գիտակցում, որ այդ սկզբունքները պետք է կիրառվեն միշտ և ամենուր (յուրաքանչյուր կոնկրետ դեպքում),
3) իրադարձությունների ընդհանուր պատկերի մեջ կատարվածի տեղի գիտակցում,
4) կատարված իրադարձության մասին բարոյական սկզբունքների դիրքերից դատելու կարողություն,
5) հիմնավորված որոշումների ընդունում,
6) սեփական գործողությունները բարոյական սկզբունքների դիրքերից գնահատելու կարողություն:

Այս ամենն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության քաղաքացի դառնալու համար:Մարդիկ կարող են ճիշտ դատողություններ կատարել չարի ու բարու մասին, սակայն վերջին հաշվով վատ վարվել: Բարոյական սկզբունքներ ձևավորելով միայն գիտակցական մակարդակում՝ մենք շրջանցում ենք սովորողի բնավորության կարևոր բաղադրիչներից մեկը՝ նրա հուզական կողմը, որը կամրջի նման միացնում է մարդու դատողություններն ու արարքները: Բնավորության հուզական կողմը ներառում է հետևյալ բաղադրիչները.

1) խիղճ (այն ամենի պարտադիր լինելու զգացողություն, ինչը անձը ճիշտ է համարում),
2) ինքնահարգանք,
3) կարեկցանք,
4) բարեսրտություն,
5) ինքնավերահսկում և հաշտվողականություն(սեփական բարոյական թերությունները ընդունելու և ուղղելու կարողություն):

Հաճախ է պատահում, որ մենք գիտակցում ենք, թե ինչ պետք է անենք, և մենք ուզում ենք դա անել, և այնուամենայնիվ չենք կարողանում մեր գիտակցությունն ու ցանկությունը իրական գործողություն դարձնել: Բնավորության դրսևորման ձևերից մեկը հիմնվում է բարոյական երեք որակների վրա՝

1) կարողություն (լսելու, շփվելու, համագործակցելու կարողություն)
2) ցանկություն(ցանկությունը խթանում է մեր գնահատելու և գործելու կարողությունները)
3) սովորույթ (սա մարդու՝ իրադարձություններին արձագանքելու ներքին տրամադրվածությունն է, որը հիմնվում է նրա բարոյական դատողությունների վրա)

Բնավորության զարգացում

Հստակ պատկերացնելով, թե ինչ է բնավորությունը, կարելի է անհրաժեշտ մոտեցումներ գտնել նրա զարգացման խնդրի իրագործման համար:Այս իմաստով դպրոցը և այնտեղ կատարվող ամեն ինչ հարկավոր է դիտել բարոյական սկզբունքների դիրքերից: Դպրոցական կյանքի բոլոր կողմերն էլ մասնակցում են սովորողների բնավորության ձևավորմանը:

Եթե դպրոցն ուզում է առավելագույնս ներգործել սովորողների բնավորության ձևավորման վրա, նրանցում ամրապնդել դրական որակներ, զարգացնել բնավորության երեք հիմնական բաղադրիչները (գիտելիք, զգացմունքներ և վարք), ապա պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկի այդ ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև պարզել, թե դպրոցական կյանքը հաստատու՞մ կամ բացասու՞մ է առաջադրված բարոյական արժեքները և դաստիարակության խնդիրները, թե՞ հակադրվում է դրանց: Դասարանում կազմակերպվող դաստիարակչական աշխատանքները ուսուցչից պահանջում են.

- Միշտ օրինակելի լինել, սեփական վարքով աշակերտների համար օրինակ ծառայել, նրանց վերաբերվել սիրով և հարգանքով, նպաստել սովորողների միջև սոցիալական ճիշտ հարաբերությունների ձևավորմանը, անհատական զրույցների կամ դասարանական քննարկումների միջոցով օգնել նրանց ուղղելու իրենց սխալներն ու բացթողումները.
- դասարանում ստեղծել բարոյական առողջ մթնոլորտ, աշակերտներին օգնել միմյանց մոտիկից ճանաչելու, միմյանց հարգելու, դասընկերոջը պաշտպանելու, կոլեկտիվի նկատմամբ պատասխանատվություն կրելու և այդ կոլեկտիվի անդամը լինելու համար հպարտություն զգալու հարցերում.
- վարքի կանոնների օգնությամբ վերահսկել բարոյական կարգապահությունը, հետևել այդ կանոնների կատարմանը.
- դասարանում ստեղծել ժողովրդավարական միջավայր, աշակերտներին ներգրավել որոշումների կայացման գործընթացներում, նրանց վրա պատասխանատվություն դնել դասարանը դարձնելու այնպիսին, որտեղ հաճելի լինի գտնվել և սովորել.
- ուսումնական գործընթացում աշակերտներին ծանոթացնել համամարդկային արժեքներին՝ այդ նպատակով օգտագործելով գրականության, պատմության, բնագիտության ուսումնական ծրագրերը.

- ուսուցման կոլեկտիվ եղանակների օգնությամբ աշակերտներին սովորեցնել հարգել միմյանց, արդյունավետ համագործակցել, կոլեկտիվի ներսում հասնել առաջադրված նպատակներին.
- աշակերտների մեջ սերմանել խնդրի նկատմամբ մասնագիտական մոտեցում ցուցաբերելու հմտություններ, սեր դեպի գիտելիքը, աշխատասիրություն, խմբային աշխատանքի կարողություններ.
- աշակերտներին մղել բարոյական թեմաներով քննարկումների՝ նրանց առաջարկելով գրքեր կարդալ, ուսումնասիրություններ կատարել, զեկուցումներ գրել, մասնակցել բանավեճերի.
- սովորեցնել կոնֆլիկտային իրավիճակներում ելքեր գտնել.

Դասարանում բարոյական մթնոլորտի ստեղծմանը զուգընթաց՝ ցանկալի է, որ դպրոցական կյանքն ինքը ցանկալի միջավայր ապահովեր երեխաների համար նաև դասարանից դուրս և այդ նպատակով.

- աշակերտների մեջ փոխադարձ հարգանք ձևավորի միմյանց նկատմամբ
- հնարավորություն ընձեռի սովորողներին՝ մասնակցելու դպրոցի և համայնքի կյանքին
- դպրոցում ստեղծի բարոյական մշակույթ, որը կնպաստի բարոյական հիմքերի մասին դասարանում ստացած գիտելիքների ամրապնդմանը
- ծնողներին և հասարակայնության ներկայացուցիչներին ընդգրկի դպրոցում կազմակերպվող դաստիարակչական աշխատանքներում՝ ընդգծելով, որ ծնողները իրենց երեխաների առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են բարոյական դաստիարակության հարցում.
- օգնել ծնողներին՝ մեթոդական երաշխավորություններ տրամադրելով այն մասին, թե ինչպես կարելի է ամրապնդել իրենց երեխաների՝ դպրոցում ստացած գիտելիքները.
- օգտագործելով հասարակայնության, եկեղեցու, տեղական իշխանությունների, ԶԼՄ-ների հնարավորությունները՝ աշակերտների շրջանում մասսայականացնել բարոյական հիմնական արժեքները։

<<Բնավորությունը ճակատագիր է>>,- ասում էր հին հունական փիլիսոփա Հերակլիտը։Մարդկային բնավորության հատկանիշները սոցիալական տեսակետից միշտ էլ կարևոր դեր են ունեցել մարդկային հարաբերություններում և հասարակական երևույթների մեջ։ Ահա թե ինչու,եթե մեզ մտահոգում է մեր հասարակության և մեր երեխաների ապագան ուրեմն բնավորության դաստիարակությունը պետք է լինի բարոյական իմպերատիվ (հրամայական պահանջ)։

Tomas Lickona, <<The Return of Character Education>>,
Educational Leadership, 51,3: 6.9-11.
Used by premission of the Association for supervision
and Curriculum Development. Copyright ¡1993 by ASCD.
All rights reserved.

Եզրակացություն

Այսպիսով անձնային որակներից շատերը բացահայտելու, ձևավորելու, զարգացնելու համար անհրաժեշտ է աշակերտների սոցիալական ակտիվությունն ապահովող միջավայր ստեղծելը և առարկայական դասաժամերը լրացնել դաստիարակությանն ուղղված գործողություններով:

Դաստիարակության գործընթացն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է դասերը կառուցել՝ կազմակերպելով քննարկումներ հասարակական հնչեղություն ունեցող թեմաների շուրջ: Առարկաներին առնչվող թեմաներով կարելի է կազմակերպել վերլուծություններ, հետազոտություններ, երկխոսություններ և այլ աշխատանքներ. դրանք ավելի կմեծացնեն աշակերտների հետաքրքրությունն առարկայի նկատմամբ:

Սովորողներին հասարակության արժանավոր անդամ դարձնելու համար, նրանց մեջ պետք է զարգացնել հետևյալ հատկությունները:

1.Իրենց շրջապատող մարդկանց կարեկցելու, ապրումակցելու կարողություն, որն ըստ էության ենթադրում է քեզ ուրիշի տեղը դնելու կարողություն, և արդյունքում սովորել գործել հանուն ընդհանուր բարօրության և հետապնդել ընդհանուր նպատակ (Սեյման1980):

2.Սեփական կարևորության զգացում, երբ մարդը զգում է, որ իր անձնական մասնակցությունը հասարակական գործում (դասարանի, քաղաքի, երկրի) առանձին արժեք է ներկայացնում, որ իր արարքները կարևոր են ուրիշների համար(Քոլբի և Դեման 1992, Մերեյման և Քինգ 1986):

3.Սեփական կյանքը պատմական պահի հետ հարաբերակցելու կարողություն: Այսինքն պետք է սեփական գործունեության և դրա նպատակների կարևորությունը գնահատել ավելի լայն համատեքստում, ոչ թե քեզ համար, այլ՝ հասարակության, անկախ նրանից՝ դա պայքար է շրջակա միջավայրի պահպանման համար, աշխատանք հանուն ընդհանուր բարօրության, թե այս կամ այն հասարակական շարժմանը միանալու փորձ (Էրիկսոն 1963):

4.Սեփական սկզբունքների և արարքների միջև անքակտելի կապի գիտակցում: Օրինակ, եթե մարդ խորապես համոզված է, որ ծերերին հասարակության մյուս անդամներից մեկուսացնելը դաժան է, ապա նա պետք է գիտակցաբար և սիրով ժամանակ անցկացնի տարեց մարդկանց հետ (Էրիկսոն 1963):

5.Վերաբերմունք, հմտություններ, գործողություններ՝ այս բոլորը լավագույն կերպով զարգանում են ոչ թե մեկ առարկայի շրջանակներում, որքան էլ այն տեղեկատվական առումով հարուստ լինի, այլ դպրոցական ուսուցման ընդհանուր համատեքստում, շնորհիվ ցուցադրումների, զանազան գործունեության, միջավայրի և ակնկալիքների՝ այն ամենի, ինչը կազմում է յուրաքանչյուր երեխայի դպրոցական կյանքի բնական հյուսվածքը (Բերման, 1991):

Գրականության ցանկ

1. Ղևոնդ Ալիշան, Հայ դասականների գրադարան. Երկեր, <<Ազգային հատուկ դաստիարակություն>>, <<Սովետական գրող>> հր. Երևան 1981թ., էջ156
2. Ա. Թոփուզյան. Դաստիարակության հայեցակարգ (նախագիծ), Մանկավարժություն, 2008թ.
3. ՍերգեյՄանուկյան Մանկավարժություն 2009 համար 7-8, էջ 54:
4. Վիկտոր Մարտիրոսյան, Մելանյա Դավթյան, Դաստիարակության հիմնախնդիրներ, Մանկավարժություն, 2004թ., հ. 4, էջ 4:
5. Մարդ և հասարակություն,2010թ., հ. 5, էջ 3:
6. ՍարգիսԳալոյան, Մենք և մեր դաստիարակությունը,Մանկավարժություն, 2015թ., հ.2, էջ 37:
7. <<Քաղաքացիական կրթություն. Ուսուցման բովանդակությունը և ակտիվ մեթոդները>>,Նատալյա Վոսկրեսենսկայայի և Սթիվեն Շեքտերի խմբագրությամբ,Երևան 2009թ.